<<ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>
9-րդ դասարան

№ 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հիսուս Քրիստոսի ո՞ր երեք առաքյալներն ականատես եղան նրա պայծառակերպությանը. ***(0.5 միավոր)***

1) Թադեոսը, Պետրոսը, Հովհաննեսը
2) Հովհաննեսը, Հակոբոսը, Պետրոսը
3) Բարդուղիմեոսը, Թադեոսը, Հակոբոսը
4) Հակոբոսը, Հովհաննեսը, Բարդուղիմեոսը

2. Խաչելությունից առաջ Հիսուս Քրիստոսը ո՞ր առաքյալի խնամքին է հանձնում իր մորը՝ Մարիամ Աստվածածնին. ***(0.5 միավոր)***

1) Հակոբոս
2) Պետրոս
3) Թադեոս
4) Հովհաննես

3. **Հայոց եկեղեցում ե՞րբ է տոնվում Ծաղկազարդը.** ***(0.5 միավոր)***

1) Սուրբ Հարությունից 40 օր հետո
2) Սուրբ Հարությանը նախորդող կիրակի օրը
3) Մեծ պահքին նախորդող հինգշաբթի օրը
4) Մեծ պահքին նախորդող կիրակի օրը

4. **Ո՞ր թվականին է տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու առաջին մեծ բաժանումը.** ***(0.5 միավոր)***

1) 325թ
2) 381թ.
3) 451թ.
4) 1054թ.

5. 1465 թ. ո՞ր կաթողիկոսը Սմբատ Արծրունուն օծեց Հայոց թագավոր.

(0.5 միավոր)

1) Ստեփանոս Տղա
2) Զաքարիա Գ
3) Ստեփանոս Ե Սալմաստեցի
4) Գրիգոր Տաթևացի

6. <<Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>. առաջին մեսրոպատառ նախադասությունը Աստվածաշնչի ո՞ր գրքից է վերցված.

(0.5 միավոր)

1) Սողոմոնի իմաստություն
2) Ժողովող
3) Երգ երգոց
4) Գիրք առակաց

7.* Ո՞ր արքայի գահակալությունից սկսած հայոց կաթողիկոսները ձեռնադրման համար այլևս Կեսարիա չմեկնեցին. *(0.5 միավոր)

1) Խոսրով Կոտակի
2) Արշակ Բ-ի
3) Պապի
4) Վռամշապուհի

8. Նվիրապետական ո՞ր աթոռի մասին է Մ. Օրմանյանը գրել. <<Ժամանակը բերեց, և ժամանակն էլ տարավ այն>>. *(0.5 միավոր)*

1) Կ.Պոլսի հայոց պատրիարքության
2) Աղթամարի կաթողիկոսության.
3) Գանձասարի կաթողիկոսության
4) Երուսաղեմի հայոց պատրիարքության

№ 9 -12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Գաբրիել հրեշտակը Զաքարիային պատվիրեց մանկանն անվանել ----------: *(1 միավոր)*

10. ---------- թագավորի հրամանով Արցախի Աղվեն թագավորական ամրոցում գումարվեց ժողով, որին մասնակցում էին Արցախի, Ուտիքի, ինչպես նաև Բուն Աղվանքի ազնվականներն ու եպիսկոպոսները: *(1 միավոր)*

11. Եկեղեցին բարեկարգելու նպատակով Հովսեփ Ա Վայոցձորեցի կաթողիկոսը ----------թ. հրավիրեց Շահապիվանի եկեղեցական ժողովը: *(1 միավոր)*

12. Տյառնընդառաջի արարողությունը Հայոց եկեղեցում սկսվում է երեկոյան ժամերգությամբ, որի ժամանակ երգվում է <<---------- >> շարականը: *(1 միավոր)*

№ 13-14
Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

(1 միավոր)

1. նարոտ
2. ժամերգություն
3. մյուռոն (մեռոն)
4. նավակատիք

ա) եկեղեցական արարողությունների ժամանակ գործածվող անուշաբույր յուղ
բ) եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է հաղորդության խորհուրդը
գ) նորակառույց կամ վերանորոգված եկեղեցին բացելու օծման հանդիսավոր արարողություն
դ) սպիտակ և կարմիր թելերի հյուսվածք, որն օգտագործվում է մկրտության ժամանակ
ե) եկեղեցում կատարվող ամենօրյա աղոթքի արարողություն

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց գահակալման տարեթվերին. ***(1 միավոր)***

1. 1831-1842 թթ.	ա.Ներսես Ե Աշտարակեցի
2. 1807-1808 թթ.	բ. Հովհաննես Ը Կարբեցի
3. 1843-1857 թթ.	գ. Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի
4. 1858-1865 թթ.	դ. Դանիել Ա Սուրմառեցի
	ե. Եփրեմ Ա Ձորագեղցի

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Տրված տոները դասավորել ըստ նրանց տոնման հաջորդականության.

(1 միավոր)

ա) Ղևոնդյանց տոն
բ) Սուրբ Ծնունդ
գ) Խաչվերաց
դ) Համբարձում
ե) Թարգմանչաց տոն

1	
2	
3	
4	
5	

16. Ժողովները դասավորել ըստ դրանց գումարման հերթականության.

(1 միավոր)

ա) Դվինի
բ) Շահապիվանի
գ) Աշտիշատի
դ) Քաղկեդոնի
ե) Արտաշատի

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. <<... Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը: Ես չե՛մ հեռանա Հայոց Առաքելական Եկեղեցու օջախից: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կանխել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ՝ շեմի վրա Մայր Աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխոսությամբ և Աստծու ողորմությամբ...>>: ***(2 միավոր)***

1) Ո՞վ է այս խոսքերի հեղինակը:

_____

2) Ո՞ր իրադարձության նախօրեին են ասվել այս խոսքերը:

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Ստորև թվարկված որոշումներից ո՞ր երկուսն են ընդունվել 354 թվականին Աշտիշատում գումարված ժողովում. ***(0.5 X 2 = 1 միավոր)***

1) Կասեցվեց ճգնավորական շարժումը, արգելվեց ճգնավորների համար վանքեր ու կուսանոցներ հիմնել:
2) Արգելվեց մահացածների վրա անվայելուչ ձևերով լացուկոծ անելը:
3) Հատուկ պատիժներ սահմանվեցին կուսակրոն հոգևորականների համար:
4) Արգելվեց պավլիկյաններին օթևան տալ, խոսել և ճանապարհ գնալ նրանց հետ:
5) Կրճատեցին եկեղեցապատկան հողատարածքները:
6) Արգելվեց բազմակնությունը:

19. Տրված փաստարկներից ընտրե՛ք երկուսը, որոնք անհրաժեշտ պայման են հաղորդություն ստանալու համար. ***(0.5 X 2 = 1 միավոր)***

1) լինել ձեռնադրված
2) լինել մկրտված
3) լինել պսակված
4) լինել հայրենասեր
5) զղջալ և խոստովանել մեղքերը

№ 20

Խնդիր-առաջադրանք (2 միավոր)

20. 1114 թ.՝ Շուղրի Կարմիր վանքում գումարված ժողովի ժամանակ հաստատվում է կաթողիկոսական ընտրության մի նոր կարգ, ըստ որի, թեև կաթողիկոսական աթոռը մնալու էր Կիլիկիայում, սակայն ամեն մի նոր կաթողիկոսի ընտրություն պետք է վավերացվեր Մեծ Հայքի չորս նշանավոր եպիսկոպոսությունների կողմից:

Հարց.

Որո՞նք էին այդ աթոռները: Մեկնաբանե՛ք, ինչո՞վ էր պայմանավորված կաթողիկոսական ընտրության այս նոր կարգի ընդունումը:

№ 21

Շարադրանք *(2 միավոր)*

21. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում 1903թ. հունիսի 12-ի օրենքը և արդյո՞ք միայն եկեղեցու դեմ էր ուղղված:

Ներկայացրեք Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի՝ այդ օրենքի գործադրման դեմ կատարած ձեռնարկումները:

Գնահատեք 1903թ. հունիսի 2-ի օրենքի դեմ սկսված շարժման նշանակությունը: